

Կարինե Լ. Առաքելյան
Բանասիր. գիյր. թեկնասծու

ԵՐԳԻԾԱՆՔԻ ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹ-ԱՇԼՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ*

Բանալի բառեր – Նշան Պեշիկթաշլյան, երգիծանք, չափածո, լեզու, խոսք, ոճ, պատկերավորման միջոց, համեմատություն, փոխաբերություն, չափազանցություն, հակադրույթ, կրկնություն:

Մուտք

Երգիծանքը յուրահատուկ վերաբերմունք է կյանքի, աշխարհի, շրջապատող իրականության նկատմամբ: Դարերի ընթացքում բազում մտածողներ փորձել են սահմանել, թե ինչ է երգիծականը, կոմիկականը, ծիծաղելին և այլն, սակայն այդպես էլ չեն հանգել ընդհանուր հայտարարի:

Անվանի փիլիսոփա, մշակութաբան Բախտինը գտնում էր, որ «երգիծանքի պատմությունն ու տեսությունը շատ թույլ են ուսումնասիրված»¹, և որ «երգիծանքի, ոչ որպես ժանրի, այլ որպես քերթողի՝ իր նկարագրած իրականության հանդեպ ունեցած վերաբերմունքի, լավագույն սահմանումներից մեկի հեղինակը Շիլլերն է... Ահա այն. “In der Satire wird die Wirklichkeit als Mangel dem Ideale als der höchsten Realität gegenübergestellt... Die Wirklichkeit ist also hier ein notwendiges Object der abneigung”»²:

Կյանքի արատներն ու թերությունները ծաղրող ու ձաղկող երգիծական գրականությունը դարերի պատմություն ունի: Երգիծաբանությունը իր ուրույն դերն ու նշանակությունը և հարուստ ավանդույթներն ունի

*Հոդվածն ընդունվել է տպագրության 27.05.2024:

¹ **Бахтин М.**, Собрание сочинений, т. 5, М., изд. «Русские словари», 1997, с. 12.

² Նույն տեղում, էջ 14: («Իրականությունը, որպես անբավարարություն, երգիծաբանության մեջ հակադրվում է իդեալին՝ որպես բարձրագույն իրականության... Այսինքն իրականությունը նրանում դառնում է պարտադիր անընդունելի օբյեկտ» (Թարգ. Բառացի):

ՎԷԸ համահայկական հանդես, ԺԶ (ԻԲ) տարի, թիվ 2 (86), ամսիկ-հունիս, 2024

նան հայ գրականության պատմության մեջ: Այն ներկա է մեր գրականության ամենավաղ շրջանում և իր զարգացման գագաթնակետին է հասել հատկապես արևմտահայ երգիծաբանության կարկառուն ներկայացուցիչներ Հակոբ Պարոնյանի և Երվանդ Օտյանի շնորհիվ: Այնուհետև այն իր ընթացքն է շարունակել արևմտահայ գրականության օրգանական շարունակությունը հանդիսացող սփյուռքահայ գրականության մեջ, որի փայլուն ներկայացուցիչներից մեկն է **Նշան Պեշկյաշյանը**:

Պեշկյաշյանը ծնվել ու նախնական կրթությունն ստացել է Պոլսում: 1922-ին, դժբախտ հանգամանքների բերումով թողնելով Պոլիսը, հաստատվել է Ֆրանսիայում և մինչև իր երկրային կյանքի ավարտը՝ 1972-ը, շուրջ կես դար իրեն անմնացորդ նվիրել է գրականությանը, հատկապես՝ երգիծաբանությանը: Պեշկյաշյանը դիմել է երգիծանքի բոլոր տեսակներին՝ դրանց արտահայտման համար ընտրելով ամենատարբեր միջոցներ:

Հետաքրքրական է, որ, բացի երգիծական արձակից, Պեշկյաշյանը գրել է նաև չափածո ստեղծագործություններ՝ տաղեր, գրույցներ, առակներ, հեքիաթներ և այլն, որոնցում երգիծանքը դրսևորվել է ոչ պակաս սուր ու պատկերավոր: Չափածոյի նյութը հեղինակը հիմնականում վերցրել է ժողովրդական ստեղծագործություններից՝ հայկական, նաև արաբական, հնդկական և այլն ու մշակելով՝ ստեղծել գեղարվեստական բարձրարժեք գործեր, որոնք աչքի են ընկնում բովանդակային բազմազանությամբ ու ճոխ լեզվով: Երգիծանքի դրսևորման համար Պեշկյաշյանն ընտրել է լեզվական, ոճական, պատկերավորման տարբեր միջոցներ, որոնք ավելի ցայտուն են դարձրել ու ընդգծել երգիծվող նյութը, և որոնցից մի քանիսին ուզում ենք անդրադառնալ ստորև:

1. Համեմատություն

Պատկերավորման լայն տարածում ունեցող միջոց է համեմատությունը, որը մեծ կիրառություն ունի թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում: Նշան Պեշկյաշյանը չափածոյում չափազանց հաճախ է կիրառել համեմատություններ, որոնք հաճախ աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ, քանի որ դրանց եզրերն առաջին հայացքից իրար հետ որևէ առնչություն ունենալ չեն կարող: Անսպասելիությունը երգիծական բնույթի ստեղծագործություններում շատ էական է և կարող է ասելիքը խիստ ծիծաղաշարժ դարձնել: Ինչպես նշվել է՝ «Հաջող համեմատության կարևորագույն հատկանիշներից մեկը անսպասելիության, նորույթի, հնարամ-

տության տարրն է: Այս իսկ պատճառով յուրաքանչյուր հեղինակ չափազանց անհատական է համեմատությունների ընտրության և գործածության իմաստով»³:

Հիշենք արաղաղի և խանի կամ սուլթանի համեմատությունը «Անմահ արևորը» հեքիաթում.

**Աքլորն երգեց. «Ոտքերս ջուրին մէջ կը խաղան
Կը լըացուիմ իբրև մի խան:
Թեևերս տաքուկ ջուրը գտան,
Կը մաքրուիմ որպէս սուլթան:
Բաղնեպաններ ունիմ երկու...
Կուկուլիկկու՛...»⁴**

Այս հեքիաթը ժողովրդական է, ունեցել է բազմաթիվ տարբերակներ: Պեշիկթաշյանից առաջ այն մշակել է Թումանյանը և անվանել «Անհաղթ արևորը»: Պեշիկթաշյանը չափածո մշակման է ենթարկել ևս երեք ժողովրդական հեքիաթ, որոնք մշակել է Թումանյանը, «Մի կարաս ոսկի» («Ոսկու կարասը»), «Ձախավեր Փանոս» («Ձախորդ Փանոսի հեքիաթը»), «Երևելի պապա Վելի» («Բեֆ անողին քեֆ չի պակսիլ»): Բոլորում իշխող է երգիծական տարրը:

«Գինի և չափ» հեքիաթում հեղինակը նկարագրում է արքայազնի պատվին կազմակերպված գինարբուքը: Արքայորդին քսան տարեկան է և իրեն հասուն տղամարդ է կարծում: Նրա հոգեվիճակն, ի թիվս այլոց, Պեշիկթաշյանն արտահայտում է հետևյալ համեմատության միջոցով.

**Արքայորդին ըսաւ.– «Գինի թող բերեն դեռ,
Ու թող բերեն կիներ իբրև նոր աղանդեր»(19):**

«Երջանկության հեքիաթը» բանաստեղծության մեջ հեղինակը նկարագրում է, թե ինչպես է թագավորը շրջում տերության մեջ՝ ընտրելու իր հարսնացուին: Կույսերը սրտատրոփ սպասում են, յուրաքանչյուրը հույս է փայփայում, որ ինքը կլինի ապագա թագուհին: Իրականությունը,

³ Ефимов А., Стилистика художественной речи, М., изд. Московского университета, 1961, с. 491.

⁴ Պեշիկթաշյան Ն., Ծիրանի գոտի, Փարիզ, տպգ. Յ. Ֆ. Ֆարեան, 1945, էջ 12: Այսուհետ այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքին կից՝ փակագծերի մեջ:

սակայն, լիովին այլ է. արքայի իրական նպատակը Պեշկեյթաշյանը բացահայտում է դարձյալ համեմատության միջոցով.

**Ու թագաւորն ահա կ'անցնի, ձերմակ ձիու մը վըրայ,
Իշխաններու ոսկեպըսակ մ'ունենալով շուրջն իրեն-
Ամէն կույսի ալ կը նայի, սատանի պէս կը խընդայ...(178)**

«Անմահ արևորը» հեքիաթում ազահ բռնակալի կերպարն ամբողջացնելիս Պեշկեյթաշյանը կիրառում է ժխտական համեմատություններ, մասնավորապես համեմատություն է տարվում հարազատ ժողովրդի զավակների ու ոսկու, այսինքն՝ սեփական հարստության միջև, և հաղթող է դուրս գալիս ոսկին. հարատևորեն մեկի նվազումով է ավելանում մյուսը, սակայն արքայի աչքը երբեք չի կշտանում

**Զաւակներուն տեղ իր ազգին՝
Նա կը սիրէր միայն ոսկին:
Ունէր ոսկով առլի պարկեր,
Գըրած էր շատ տուրք ու հարկեր,
Մինչ կը հիւծէր մարմինն ազգին,
Կը բազմանար պարկով ոսկին(7):**

2. Փոխաբերություն

Գեղարվեստական գրականության մեջ խիստ հաճախակի կիրառություն ունեցող պատկերավորման միջոց է փոխաբերությունը, որը հաճախ է հանդիպում նաև երգիծական խոսքում: Ընդգծվել է, որ «փոխաբերությունը սահմանվում է որպես թաքնված համեմատություն, որն իրականացվում է մի առարկան անվանելով մյուսի փոխաբերեն և դրանով ի հայտ բերելով երկրորդին բնորոշ որևէ էական հատկանիշ»⁵:

Փոխաբերություններն ընդունված է բաժանել երկու հիմնական տեսակի՝ լեզվական և խոսքային: Լեզվական փոխաբերություններն ընդհանրական բնույթ ունեն, որանք ժամանակի ընթացքում խոսքայինից վերածել են լեզվականի: Խոսքային փոխաբերությունները, որոնց երբեմն անվանում են անհատական, ստեղծվում են անհատների՝ հիմնականում հեղինակների կողմից և խոսքային համապատասխան միջավայրում ծա-

⁵ Арнольд И., Стилистика современного английского языка, Л., изд. “Просвещение” 1973, с. 146.

ռայում են որոշակի նպատակների: Փոխաբերությունները կարող են արտահայտվել մեկ բառով, կապակցությամբ, նախադասությամբ, մինչև իսկ ամբողջական ստեղծագործությամբ:

Պեշիկթաշյանի երգիծական չափածոյում փոխաբերությունը շատ լայն կիրառություն ունի: Հիշենք մի քանի օրինակ: «Գինի և չափ» հեքիաթում արքայորդու պատվին խնջույք կազմակերպած նախարարը քիչ է մնում պայթի հպարտությունից. Այս հոգեվիճակը նկարագրված է փոխաբերության միջոցով.

**Տեսնրած չէր նրման խընջույք ու խըրախճանք:
Նախարարն էր հըպարտության մի ուռած տիկ.
Կըզմայլէին անշուշտ իր վրայ բոլոր մարդիկ (19):**

Գինարբուքը, սակայն, ունենում է աղետալի վախճան. մահանում է գահաժառանգը, իսկ նախարարի վիճակը փոխվում է հիմնիվեր, ինչը դարձյալ արտահայտված է փոխաբերությամբ.

**Նախարարն հէք, ժամեր առաջ, էր ոսկի կուռք,
Արդ եղած էր մեռել, մոմիա, կործանած բուրգ (21):**

«Մի կարաս ոսկի» հեքիաթում թագավորն անընդհատ փորձում է տիրանալ ազնիվ շինականների արտում գտնված ոսկուն, սակայն ամեն անգամ ձեռքը դիպցնելիս գտնում է իժ ու քարք տեսակի օձ: Այս ամենը կատաղեցնում է նրան, և նա սկսում է բարկությունը թափել անմեղ մարդկանց վրա: Տեսարանը Պեշիկթաշյանը նկարագրել է հետևյալ փոխաբերության միջոցով.

**Ակոաներն իր արքան կ'աղար
Ու մէջերէն շանթ կը տեղար (33):**

«Բանաստեղծն ու էշերը» հեքիաթում Պեշիկթաշյանը նկարագրում է արևելյան մայրաքաղաք Բաղդադը և Հարուն Ալ Ռաշիդ թագավորի պալատը, որտեղ ապրում են տարբեր մարդիկ, նրանց թվում՝ բանաստեղծը: Վերջինս մի տարօրինակ հրաման է խնդրում արքայից. տերության մեջ այն տղամարդը, ով վախենում է իր կնոջից, բանաստեղծին զիջի իր էշը: Հրամանը վերցնելով՝ քերթողը հեռանում է պալատից, վերադառնում տարիներ անց՝ ավանակների հսկա նախրի ուղեկցությամբ և բացատրում իր գործունեությունը շատ սեղմ ու փոխաբերաբար.

**Ըրի իմ փորձերն այր մարդոց վըրայ,
Արդիւնքն աւասիկ, սաստիկ կը գըռայ (54):**

Հարուն ալ Ռաշիդի ժամանակը, բարքերը, պալատը պատկերված են նաև «Երևելի պապա Վելի» չափածո մշակված հեքիաթում: Հեքիաթի հերոսը՝ Վելին, որ մի աղքատ կոշկակար է, գտել է ուրախ ապրելու կերպը, որը չի կորցնում ոչ մի պարագայում: Նույնիսկ, երբ իրեն գինվորագրում են, որ պահպանի արքունի պալատը, վաճառում է սուրը և այդ փողով քեֆ կազմակերպում: Իր արարքը նա բացատրում է փոխաբերությունների միջոցով՝ արտահայտելով հակադրությունը արքունի պաշտոնյայի և ազնիվ աշխատավորի:

**Կը գործածէ թուր էմիրը,
Թուրէն հոսի միշտ կարմիրը:
Թուր ինկաւ ինձ՝ քեյֆ անողիս
Ու կը հոսի գինիս, օղիս (73):**

Տեղին է նշվել, որ «փոխաբերությունը, որպես կանոն, բանաստեղծական տեքստում ունի առաջատար դեր: Շարադրանքի հիմնական գաղափարները բացահայտվում են փոխաբերության միջոցով»⁶:

Փոխաբերության առանձին տեսակ են դարձվածներն ու դարձվածային կապակցությունները, որոնք «երկու և ավելի բառերի այնպիսի միացություններ են, որոնք ամբողջությամբ առած մեկ փոխաբերական իմաստ են արտահայտում»⁷:

Դաձվածները հաճախ են դրսևորում երգիծաստեղծ ու ոճաստեղծ հատկություններ և դրանով պայմանավորված՝ կիրառվում երգիծաբանության մեջ, նաև՝ Պեշկեթաշյանի չափածոյում: Պեշկեթաշյանը խոսքին երգիծական երանգ հաղորդելու նպատակով երբեմն կիրառել է դարձվածներ, իսկ ավելի հաճախ՝ դարձվածային տարբերակներ, որոնց ստեղծել է՝ կապված ասելիքի առանձնահատկությունների հետ:

Չափածոյում Պեշկեթաշյանը կիրառել է ժողովրդական լեզվին բնորոշ առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր, խորհրդածություններ և այլն, հատկապես՝ կերպարների խոսքում: Միայն «Երևելի պապա Վելի»

⁶ Пелевина Н., Стилистический анализ художественного текста, Л., изд. “Просвещение”, 1980, с. 59.

⁷ Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Եր., ԵՊՀ հրատ., 1991, էջ 38:

հեքիաթում հանդիպում ենք բազմաթիվ այսպիսի դեպքերի, ինչպես. «Գինին հարսնուկ մ'է անմեղուկ // Որ շիկներ է, եղեր հեղուկ» (58), «Աստուած երբոր մի դուռ գոցէ՝ // Գիտցիր որ նոր մի դուռ բաց է» (59), «Խորհիլ ցալին վրայ ապագայ՝ // Տրխամարութին մըն է հսկայ» (60), «Սիրտը ցատկ կը փըշրէ մարդ. // Տարտ անողին չի պակսիր տարտ» (60), «Բախտն հեղուկ է ու շատ նման // Մեր գինիին մարդն ալ աման, // Լա՛յն, լայնին հետ, նե՛ղ՝ նեղին հետ, // Անողին ձենն առնէ յաւէտ» (63), «Ով որ ուրախ ու զըւարթ չէ՝ // Աստուծոյ դէմ կը մեղանչէ» (64) և այլն:

3. Չափազանցություն

Երգիծաբանության մեջ չափազանցությունն ունի հաճախակի կիրառություն: Այն ենթադրում է գույների խտացում, մտքի կամ գաղափարի արտահայտում ոչ իրական չափերով, ինչի շնորհիվ երգիծով երևույթն ավելի ցայտուն, տպավորիչ ու գունեղ է դառնում:

Հիշենք «Գինի և չափ» հեքիաթը, որը հարուստ է չափազանցություններով: Որդու մահից անմիջապես հետո արքան արգելում է թագավորության մեջ գինի խմելը՝ չենթարկվողին սպառնալով մահապատիժ: Այս իրավիճակը հեղինակը նկարագրում է չափազանցությունների միջոցով՝ խիստ պատկերավոր ու գունագեղ.

**Ողջ երկրին մէջ արգիլուեցաւ ընդմիշտ գինին,
Մոլիներէն խեղդուեցան, զո՛հ, մէկ քանին,
Նետուելով մէջ աւագանին գինիով լի՝
Որ կերպն եղաւ մահուան պատժին հրրաշալի:
Գինի երկրէն հեռացած էր մինչեւ լուսին՝
Հէքիաթներու մէջ խօսեցան անոր մասին (23):**

Երկար, սակայն նման կերպ շարունակվել չէր կարող. հաջորդ տողերը, որոնք ստեղծում են հանգուցալուծմանը, ևս առատ են չափազանցություններով.

**Յօթ տարի վերջ, յանկարծ, մի օր արեւուրախ՝
Ոստան մըտաւ առու առիւծ մի փըրփրերախ՝
Եղան ասուն եւ անասուն իսկ ծակամուտ:
Փակուեցան բիւր տուներ, դըռներ, շուկայ, խանութ (23):**

Առյուծը մարտահրավեր է նետում ողջ հանրությանը, նախևառաջ՝ արքային.

**Կարծես կ'ըսեր.- «Կ'արհամարհեմ, քիչ մ'ալ կ'ատեմ
Իշխանութիւնդ, ո՛վ թագաւորդ վեհափառ
Որ հարձերուն գոգը պահուած, չունիս բարբառ»:
Մարդիկ էին անգինի իսկ արքան անհաց:
Պալատին մէջ այլեւս փշրանք չէր մընացած (23):**

Առյուծին հաղթում է թագավորի հրամանն անտեսած և գինի չափավոր օգտագործած երիտասարդը: Թագավորության մեջ ամեն ինչ հիմնիվեր շրջվում է, սկսվում է արգելված ընկելիքի գովքը՝ դարձյալ չափազանցյալ.

**Ով չըկնծե կարմիր գինի
Ան չունենար գըլխին դափնի...
Գինին շող է զըւարթարար,
Խոնջած մարդուն տայ երեկոյթ, փոխադրելով երկնականար:
Առիւծ կ'ընէ սիրտը գառան
Եւ համրերուն նոյնիսկ բերանն իսկոյն կ'ընէ սոխակաստան (25):**

Պեշկվթաշյանը չափազանցություններ ստեղծում է նաև աշխարհագրական անունների միջոցով: «Բանաստեղծն ու էշերը» հեքիայում դեպքերը տեղի են ունենում Իրաքում: Երբ բանաստեղծը վերադառնում է Բաղդադ՝ մեծ նախրի ուղեկցությամբ, պալատականները՝ մասնավորապես վեզիրը, փորձում են այս տեսարանը պատկերավոր ներկայացնել թագավորին.

**Այդ քերթողն հիմա ելաւ երեւան,
Իր հետը ունի անծայր կարաւան:
Անծայր կարաւան էշ, աւանակի՝
Որուն ծայրն է մէջ Պաղտատ քաղաքի
Իսկ ձողթը, կ'ըսեն, Պասրա տակաւին (53):**

Պասրա (Բասրա) տեղանունը պատահական չէ ընտրված: Այս քաղաքը գտնվում է Իրաքի հարավում և գրեթե սահմանակից է Իրանին: Հե-

դինակը սրանով ուզում է ընդգծել անհավանական մեծ տարածությունը և ավանակների անհավանական քանակը:

Պեշիկթաշյանը ոճական նպատակներով երբեմն դիմել է գրոտեսկի: Ինչպես հայտնի է, գրոտեսկը չափազանցության ծայրահեղ աստիճանն է: «Դա այնպիսի պատկեր կամ նկարագրություն է, որի մեջ դիտմամբ խախտվում են երևույթի արտաքինը, բնական կապերը, հաճախ տալով նրանց ֆանտաստիկ, անիրական տեսք: Դրա միջոցով, սակայն, բացահայտվում է երևույթի իսկական իմաստը»⁸:

«Անմահ արևորը» հեքիաթում հեղինակը չափազանց խտացնում է գույները և գրոտեսկի միջոցով ավարտին հասցնում անսահմանորեն ազահ բռնակալի պատկերը, ինչը խորը նողկանք է պատճառում ընթերցողին...

**Այս գէշ հոտէն պիտի մեռնիմ...
Սա աղբանոց չէ մի գիւղի,
Այլ քաղաքի մի կոյուղի...
Չէի տեսած մի տեղ կեղտոտ՝
Այսքան նեխած ու գարշահոտ... (14)**

4. Հակադրույթ

Երգիծաբանության մեջ պատկերավորման հաճախակի կիրառություն ունեցող միջոց է հակադրույթը, որով հակադիր իմաստ ունեցող բառերի գործածությամբ հակադրվում են առարկաներ, հատկանիշներ, երևույթներ: Ամբողջությամբ հակադրույթներից կազմված երգիծաբանական խոսքի փայլուն նմուշ է բանաստեղծի ճառը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վիպակում, որտեղ տրամաբանությունից բացարձակապես գուրկ խոսքի միջոցով Պարոնյանը բացահայտում է իր կերպարի՝ բանաստեղծի փուչ էությունը. «անոնք անցյալ են, մենք՝ ապառնի, անոնք խավար են, մենք լույս, անոնք տգետ են, և մենք՝ գիտուն, անոնք սուր են, մենք՝ գրիչ, անոնք աստելություն են, մենք՝ սեր, անոնք կրակ են, մենք՝ ջուր, անոնք միս են, մենք՝ բանջարեղեն, անոնք վարունգ են, մենք՝ խնձոր, անոնք փուշ են, մենք՝ վարդ»⁹:

⁸ Զրբաշյան Էդ., Գրականության տեսություն. Եր., ԵՊՀ հրատ., 1980, էջ 243:

⁹ Պարոնյան Հ., Ընտիր երկեր, գիրք 1, Եր., «Հայպետհրատ», 1954, էջ 396:

Իրականի ու ցանկալիի աղաղակող հակասություններն ամենից ավելի ցայտուն արտահայտվում են պատկերավորման հենց այս միջոցով, և դա է պատճառը, որ այն խիստ տարածված է երգիծաբանության մեջ. բացառություն չէ Պեշիկթաշյանի չափածոն: Այստեղ հեղինակը հակադրությունը կազմում ու կիրառում է միանգամայն տարբեր ձևերով ու եղանակներով:

«Երևելի պապա Վելի» հեքիաթում թագավորը հերոսին փորձելու նպատակով արգելում է ջրավաճառությունը, ինչն ապշեցնում է Վելիին, որը տեղյակ չէ արքայի մտադրությանը և անում է բնական եզրակացություն.

**Արգելք ըլլալ ծախելու ջուր
Երբ երկրնքէն կը տեղայ հուր:
Այդպէս արգելք տալու համար՝
Արբան պէտք է ըլլայ յիմար (64):**

Ինչպես տեսնում ենք, հակադրությո՞ւնը կազմվել է հականիշ գույգի՝ **հուր** և **ջուր** գոյականների միջոցով, որոնք ասելիքի ծանրության կենտրոնն են և անհեթեթ իրավիճակի հիմնական բնութագրիչները:

Մասնագիտական գրականության մեջ ընդունված է հականիշները բաժանել որոշակի խմբերի, որոնցից են լեզվական և խոսքային, բուն կամ համագործածական և համատեքստային կամ անհատական հականիշները¹⁰: Լեզվական հականիշներն իրենց առաջնային իմաստներով հակադրվում են միմյանց և երբեմն կոչվում են նաև բացարձակ հականիշներ:

Ընդունված է համարել, որ խոսքը ոճավորելու առումով խոսքային հականիշների հնարավորություններն ավելի մեծ են, սակայն չափտի մոռանանք, որ լեզվական հականիշները ևս ունեն կիրառության շատ լայն շրջանակ և ոճական մեծ արժեք: Բավական է հիշել ժողովրդական տարբեր առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր, դարձվածներ, ինչպես. «Չորը թացի հետ է վառվում», «Ինչ որ ցանես, այն կհնձես», «Շատ մի՛ ատիր, սիրել կա», «Նրբազգացն իրեն է տանջում, անզգամը՝ ուրիշին», «Քաջը մեկ անգամ է մեռնում, վախկոտը՝ հազար» և այլն:

Պեշիկթաշյանի չափածոյում ևս մեծ է լեզվական հականիշների ոճական դերը: Հիշենք «Գազաններուն ուրախությունը» առակը, որում

¹⁰ Հմնտ. Մեյրնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., «Լույս» հրատ., 1984, էջ 83:

նկարագրված է վայրի գազանների խրախճանքը: Ուրախության առիթը մանր անասունների առատ ծնունդներն են, ինչի մասին առակի վերջում խոսում է կինձը.

**Փոքրերը որքան ունենան ծնունդ՝
Մեծերըս նոյնքան կ'ունենանք սընունդ:
Էզերն, այս տարի, մայր են բազմածին.
Ազգն երբ բազմանայ՝ կուգայ մեր գործին (102):**

Հակադրությամբ կազմված է **մեծ** և **փոքր** որակական ածականների միջոցով՝ մեծ ու փոքր կենդանիների հակադրությից հասնելով հակադրությունների միանգամայն այլ հարթություններում՝ մեծ ու փոքր կամ հզոր ու տկար մարդկանց, խմբերի, ազգերի, պետությունների: Տեղին է հիշել Աստվածաշնչի իմաստունի խոսքը. «Առիւծների որսը անապատի վայրի է-շերն են, այդպէս էլ հարուստների կերակուրը աղքատներն են»¹¹:

Լեզվական հականիշներից զատ «խոսքի մեջ շատ հաճախ հականիշային կիրառություն են ստանում այնպիսի բառեր ու բառաձևեր, որոնք առանձին վերցրած միմյանց նկատմամբ հակադիր իմաստներ չունեն, այսինքն՝ լեզվական հականիշներ չեն, նշանակում է՝ խոսքի մեջ բառերի իմասային տարողունակության սահմանները ընդարձակվում են, և բառերը ձեռք են բերում հակադրական հարաբերություններ արտահայտելու լայն հնարավորություններ»¹²:

Չափածոյում անհամեմատ մեծ է խոսքային հականիշներով կազմված հակադրությների թիվը: Հաճախ սրանցով կառուցվում են առակների վերջաբանները՝ բարոյականները, իսկ հակադրության եզրերը վերցվում են կենդանական աշխարհից, օրինակ՝ գայլ ու գառ, մայուն ու ոռնոց, առյուծ և աղվես և այլն, ինչպես. «Մի ծեր շինական ըսաւ Մինասին. – «Գայլը գառան հետ չապրիր միասին: Բընազդ ըսուածն ալ չես կարող թաղել: Կարելի բան չէ դերերը փոխել»» (130), «Այս աշխարհի եդեմական՝ Ադմուկին մէջ շատ ձայներ կան, Բայց մին մային, միւսն է ոռնոց. Երկիրն է մեծ ըսպանդանոց» (111), «Թագուհիդ, ճիշտ է, մեկ ձագ ծընած է, Բայց ան աղուէս չէ, ինձ պես առիւծ է» (96) և այլն:

¹¹Սիրաք 13.23, Աստուածաշունչ, Հայաստանի Աստուածաշնչային ընկերութեան հրատ., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994, էջ 927

¹²Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989, ԳԱ հրատ., էջ 156:

Պեշիկթաշյանը երբեմն կիրառում է դարձվածներ, առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր, նաև սրանց՝ իր ստեղծած տարբերակներ, որոնք կառուցված են հակադրույթի սկզբունքով: Այսպիսի դեպքերի հանդիպում ենք «Ձախավեր Փանոս» հեքիաթում. հերոսն ունի իր «փիլիսոփայությունը», որն արտահայտելու համար հեղինակը դիմում է ժողովրդական մտածողությանը բնորոշ վերը նշված միավորներին.

**Ամէն չարիքի մեջ կայ մի բարիք,
Ճըշմարտութիւնն այս չեն գիտեր մարդիկ:
Անբախտութենէն կը ծընի բախտը,
Ու մերկութենէն Ադամին դրախտը.
Փուշերէն կուգան մեզ՝ կոկոնները,
Իսկ անձարակէն վերջ ալ տօները...(44)**

Պեշիկթաշյանի չափածոն հազեցած է հակադրույթներով, ընդ որում՝ ոչ միայն երգիծական չափածոն: Կան բանաստեղծություններ, որոնք ամբողջությամբ կառուցված են հակադրույթներով կամ ամբողջական հակադրույթներ են: Այսպիսին է «Ատելություն» բանաստեղծությունը, որում իշխող է սեր-ատելություն, սիրել (պաշտել)-ատել հակադրությունը՝ որպես քնարական հերոսի՝ մերժված սիրահարի հոգեկան ցավի ու սովայտանքի արտահայտիչ.

**Սէրըս, այսօր, ատելութեան փոխեցի...
Գոհացի՛ր, բա՛խտ, ա՛լ պաշտելիս ես կ'ատեմ (170):**

5. Կրկնություն

Իմաստային և ոճական միանգամայն տարբեր նպատակներ են հետապնդում կրկնությունները՝ այլևայլ մակարդակներում՝ միշտ մնալով հավատարիմ խոսքի երգիծականացմանը: Կրկնությունների արմատները գալիս են դարերի խորքից և իրավամբ կապվում են ժողովրդական բանահյուսության հետ: Հայտնի է, որ «ժողովրդական բանավոր քնարերգությունը լայնորեն օգտվում է բառակրկնություններից՝ նպատակ ունենալով պատումը երկարածգելու, ասքին տաղաչափական նկարագիր հա-

դորդելու, և հաճախ ի հայտ է գալիս ռիթմական պահանջներից ելնելով»¹³:

Ստորոգյալի կրկնության հետաքրքիր օրինակի հանդիպում ենք «Հարալեզներ» առակի մեջ: Ընտանի կենդանիները զրուցում են ու փորձում հասկանալ, թե իրենց տիրուհին ինչու է սիրում միայն շանը ու կատվին: Շունը բացատրում է ու բացահայտում գաղտնիքը՝ այդ անելով կրկնության միջոցով.

**Շունն ընդմիջեց.– «Կը լիզե՛մ...
Ես կը լիզեմ կին, մարդիկ,
Կը լիզեմ ոտք ու թաթիկ,
Կը լիզեմ այտ ու կրճակ,
Գիտեմ լիզել ես պրնակ» (122):**

Կրկնությունը խտացրել է գույները և ավելի ցայտուն դարձրել **լիզել** հասկացողության խորքային բնույթը՝ ուղղակի իմաստից կամ տեսանելիից մինչև փոխաբերական՝ նողկանք պատճառող քծնանք և ստորաքարշություն, «հաջողությունների» հիմք հանդիսացող պնակալեզություն: Պատահական չի ընտրված նաև առակի վերնագիրը, որն ամբողջացնում է անընդհատական լիզելու գաղափարի ողջ այլանդակությունը: **Հարալեզ** բառը բացատրվում է. «1. (դից.) Առասպելական շնակերպ կենդանի, որ լիզելով կենդանացնում էր պատերազմում զոհվածներին: 2. փխբ. Հրեշ»¹⁴:

Կենդանիներն անում են իրենց տխուր, սակայն իրատեսական եզրակացությունը. «Դըժբախտաբար, Քըծնողներունն է աշխարհ...» (123):

«Բանաստեղծն ու էշերը» հեքիաթում հանդիպում ենք էշ բառի կրկնության հետաքրքիր օրինակի: Բանաստեղծի «շահած» ավանակները հեղեղել են Բաղդադի փողոցները, գտնվում են իրենց բնական ու անկաշկանդ վիճակում: Այս խիստ զավեշտալի տեսարանը հեղինակը ներկայացնում է կրկնության միջոցով՝ չափազանց աշխույժ ու տպավորիչ.

**Էշե՛ր, քուռակներ որոնք կը զրռա՛ն,
Էշեր էշերու կը ցատկեն վրրան,**

¹³ Гальперин И., Очерки по стилистике английского языка, М., изд. «Иностранной литературы», 1958, с. 259.

¹⁴ Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան» հրատ., 1976:

**Էշեր են կարծես ամէնքն ալ չըռան,
Էշեր որ կ'ընեն փողոցն աղբանոց
Էշեր մեծ ու փոքր, յամառ, արտառոց (54):**

Մեկ այլ դրվագում Պեշիկթաշյանը կենդանիներով լեցուն պողոտան ներկայացնում է մեկ տողով՝ այստեղ էլ կիրառելով **Էշ** արմատով կազմություն, որը հեղինակային նորակազմություն է և պատկանում է դիպվածային բառաշերտին. «Պողոտանգետէրեղածիշահոս» (53):

Խոսքը ոճավորելու մեծ կարողությամբ է օժտված բաղաձայնությամբ՝ նույն կամ նման բաղաձայնների կուտակումը: Հայ քնարերգության պատմության մեջ բաղաձայնությամբ հայտնի է վաղ շրջանից, բարձր վարպետությամբ է օգտագործվել միջնադարյան բանաստեղծների, հատկապես Սուրբ Գրիգոր Նարեկացու կողմից՝ թե՛ Մատյանում, թե՛ տաղերում: Պեշիկթաշյանի չափածոյում ևս հանդիպում են բաղաձայնային ինքնատիպ օրինակներ: «Առյուծն ու բորենին» առակում առկա է ձայնեղ պայթական **բ** հնչյունի կրկնության հետաքրքիր դեպք: Առյուծ արքան խորը զզվանքով է խոսում բորենու մասին, որը միակն է կենդանական աշխարհում, որ դիակ է ուտում: Առյուծը նշում է, որ բորենու մարմինն ամբողջությամբ բոր է, այսինքն՝ ախտ, որ բորենին անխիղճ է, քանի որ դիակը «պիղծ է, բայց նուիրական», իսկ խոսքն ավելի ազդեցիկ է դառնում բաղաձայնային շնորհիվ.

**Դուն կը կոչուիս բորեան, բորէ՛
Ու մարմինդ ալ ամբողջ բոր է (97):**

Պեշիկթաշյանի չափածոյում հանդիպում ենք հոմանշային կրկնության հետաքրքիր օրինակների: «Առյուծի քաղաքականություն» առակում հեղինակը նկարագրում է անտառում տիրող իրավիճակը, տարբեր կենդանիների, կենդանախմբերի ու տեսակների ատելությունն ու թշնամանքը միմյանց նկատմամբ, անընդհատական կոիվներն ու բախումները և այս ամենի համապատկերին՝ առյուծ արքայի լռությունը: Այս լռությունը, որ հարատև աղետների պատճառ է դառնում, Պեշիկթաշյանը նկարագրում է հոմանշային կրկնության միջոցով՝ առավել ամբողջական ու պատկերավոր.

**Առիւծը կ'ապրէր իբրեւ վեհափառ,
Քաշուած, անբարբառ...**

**Վարնան վերջ կռիւ, բայց առիծն էր մունջ,
Ոչ իսկ մի մռունջ:
Անտառին կեդրոնն էր պալատ-բըլուր՝
Եւ արքան միշտ լուռ (88):**

Արքայի լռությունը տալիս է իր դատը պտուղը. կենդանիները թուլանում, արնաքամ են լինում ու դառնում հեշտ կառավարելի. այսպես առյուծը սանձում է անտառը:

Պատահում են դեպքեր, երբ կրկնությունն ու հոմանշային կրկնությունը միահյուսվում են, կիրառվում կողք -կողքի, ինչի արդյունքում ասելիքն առավելագույնս ամբողջական ու ազդեցիկ է դառնում: «Գինի և չափ» հեքիաթի դրվագներից մեկում մեծ է **գինի** գոյականի կրկնության ոճական դերը: Գինին խնջույքի հիմնական դերակատարն է, մնացած ամեն ինչ, նույնիսկ ամեն ոք լրացնում են նրան: Քսաներկու տողի մեջ այս բառն օգտագործվել է քսան անգամ՝ շարահյուսական տարբեր պաշտոններով, նաև՝ որպես միակազմ նախադասություն.

**Խըրախն էր մեծ, գինի, նրագ, գինի, պարեր,
Գինի, երգեր, գինի, ուղերձ, գինի, ճառեր (18):**

Համեմատաբար փոքր հատվածում **գինի** գոյականից զատ կիրառված են նրա մի շարք խոսքային հոմանիշներ, ինչպես՝ **հեղուկը հիր, հուր բագինի, նուռ արքունի, թույն գեհենի, վարդ գարունի** և այլն: Ավելորդ է ասել, թե կրկնությունների այս մեկտեղումը որքան կենդանի ու արտահայտիչ է դարձրել գինարբուքի տեսարանը:

Եզրակացություններ

Նշան Պեշիկթաշյանը սփյուռքահայ գրականության ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկն է և առավել հայտնի է որպես երգիծաբան: 1922-ին, ողբերգական հանգամանքների բերումով թողնելով Պոլիսը, հաստատվել է Փարիզում և մինչև իր երկրային կյանքի ավարտը՝ 1972-ը, իրեն անմնացորդ նվիրել գրականությանը, հատկապես երգիծաբանությանը: Նշան Պեշիկթաշյանի ստեղծագործություններում երգիծանքը դրսևորվել է արձակի ամենատարբեր ժանրերում՝ ակնարկ, պատմվածք, վեպ, թատերախաղ և այլն: Հեղինակը դիմել է երգիծանքի բոլոր տեսակներին՝ դրանց արտահայտման համար ընտրելով ամենատարբեր միջոցներ:

Բացի երգիծական արձակից, Պեշիկթաշյանը գրել է նաև չափածո ստեղծագործություններ՝ տաղեր, գրույցներ, առակներ, հեքիաթներ և այլն, որոնցում երգիծանքը դրսևորվել է ոչ պակաս սուր ու պատկերավոր: Չափածոյի նյութը հեղինակը հիմնականում վերցրել է ժողովրդական ստեղծագործություններից՝ հայկական, նաև արաբական, հնդկական և այլն ու մշակելով՝ ստեղծել գեղարվեստական բարձրարժեք գործեր:

Նշան Պեշիկթաշյանի երգիծական չափածոն հատկորոշվում է տարբեր արժանիքներով՝ գաղափարական, գեղարվեստական, գեղագիտական և այլն: Դրանցից մեկն է ճոխ լեզուն և զարմանալի պատկերավոր խոսքը, որին հասնելու համար հեղինակը դիմել է լեզվական զանազան նաև պատկերավորման միջոցների: Անփոփելով մեր համառոտ քննությունը՝ պիտի փաստենք, որ ոճական առումով այս միավորների հնարավորություններն ահռելի են, և հաճախ սրանց առկայության հետ է կապված խոսքի արտահայտչականությունը, հագեցվածությունը, ազդեցիկությունը, աշխուժությունը և այլ արժանիքներ: Համեմատությունները, փոխաբերությունները, չափազանցությունները, հակադրույթները, կրկնությունները և այլն խոսքը հարստացրել են տարբեր նրբերանգներով, օժտել այլաբանական նշանակությամբ, հաղորդել երգիծական բնույթ, որը, կախված ասելիքի առանձնահատկություններից, դրսևորվել է տարբեր կերպ՝ հումորայինից մինչև կծու հեգնական: Խոսքը ոճավորելու հարցում մեծ է լեզվական և խոսքային հականիշների, բաղաձայնայթի, հոմանշային կրկնությունների, դարձվածների, դարձվածային տարբերակների, առած-ասացվածքների, թևավոր խոսքերի դերը, որոնք ի թիվս այլոց, խոսքը մոտեցրել են ժողովրդականին, ինչի շնորհիվ այն դարձել է զարմանալի կենդանի, ծիծաղաշարժ նաև ընթերցողին հարազատ ու խիստ հասկանալի:

Կարինե Լ. Առաքելյան – հեղինակ է երեք գրքի և չորս տասնյակից ավելի գիտական հոդվածների: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է արդի հայերենի բառագիտությունը, ձևաբանությունը, շարահյուսությունը, ոճագիտությունը:

Էլ. հասցե՝ karine.arakelyan.2016@mail.ru

Summary

LINGUAL - STYLISTIC MEANS OF SATIRE IN THE POETRY OF NSHAN PSHIKTASHLIAN

Karine L. Arakelyan

Candidate of Sciences in Philology

Key words - Nshan Peshiktashlian, satire, poetry, language, speech, style, mean of representation, comparison, metaphor, exaggeration, contrast, repeating.

In Armenian literature the genre of satire reached its apogee in the 19th and 20th centuries, in the works of such Western Armenian writers as Hagob Paronian and Yervand Otian. Being one of the most brilliant satirists in the Diaspora literature, Nshan Peshiktashlian followed the legacy of the Western Armenian writers. In 1922, leaving Polis due to tragic circumstances, he settled in Paris, and until the end of his earthly life in 1972, he devoted himself unceasingly to literature, especially to satire. In the works of Nshan Peshiktashlian, satire was manifested in various genres of prose: review, short story, novel, play, etc.

In addition to satirical prose, Peshiktashlian also owns poetic works, in particular poems, fables, tales, fairy tales, etc., in which satire is manifested no less sharply and

Expressively. Poetic works stand out for various merits: ideological, artistic, etc. One of them is rich language and the amazing figurative speech, which is greatly contributed by the abundance of linguistic means of imagery, their correct and appropriate use. Comparisons, metaphors, exaggerations, contrasts, repeats, etc. enriched the speech with various nuances, endowed it with an allegorical meaning, and conveyed a satirical character, which, depending on the characteristics of what was being said, manifested in different ways, from humorous to bitterly ironic.

In terms of stylizing the speech, is great the role of linguistic and verbal antonyms, consonants, synonymical repetitions, phrases, phrase variants, proverbs, and catchphrases, which, among others, brought the speech closer to the folk, due to which it became amazingly alive, funny; familiar to the reader, and very understandable.

Nshan Peshiktashlian's poetry teems with antonyms, which endow the text with unique stylistic coloring and expressiveness. Antonyms play a significant role in the creation of antithesis, which, as a figure of speech, is an integral component of satiric speech.

All kinds of satire are present in the poetic works of Nshan Peshiktashlian, and for their reflection, the correct lingual - and stylistic means are selected.

ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКИЕ СРЕДСТВА САТИРЫ В ПОЭЗИИ НШАНА ПЕШИКТАШЛЯНА

Карине Л. Аракелян

Кандидат филологических наук

Ключевые слова - Ншан Пешикташлян, сатира, поэзия, язык, речь, стиль, средство изображения, сравнение, метафора, гипербола, антитеза, повтор.

В армянской литературе сатирический жанр достиг своего апогея в XIX–XX вв., в частности, в творчестве западноармянских писателей Акопа Пароняна и Ерванда Отяна. Традиции западноармянской литературы переняли писатели Диаспоры, и в их числе Ншан Пешикташлян, ставший одним из ярких сатириков в литературе диаспоры. В 1922 году, покинув Константинополь в силу трагических обстоятельств, он поселился в Париже и до конца своей земной жизни, до 1972 года, был беспрестанно посвящен литературе, особенно сатире. В творчестве Ншана Пешикташляна сатира проявлялась в различных жанрах прозы: обзоре, рассказе, романе, пьесе и т.д.

Кроме сатирической прозы Пешикташлян также принадлежат поэтические произведения, в частности стихи, басни, сказы, сказки и т.д., в которых сатира проявляется не менее остро и выразительно. Сатирическая поэзия Пешикташляна обладает рядом достоинств: идейными, художественными и т.д. Одним из них является великолепный язык и удивительно образная речь, чему немало способствует обилие лингвистических средств выразительности, их правильное и уместное использование. Сравнения, метафоры, гиперболы, антитезы, повторы и другие средства выразительности обогащают речь различными оттенками, придают ей иносказательный смысл и сатирический характер, который в зависимости от особенностей сказанного проявлялся по-разному: от юмористического до горько-ироничного.

В стилизации речи велика роль языковых и словесных антонимов, аллитераций, синонимических повторов, фраз, словосочетаний, пословиц, крылатых фраз, которые, среди прочего, приближали речь к народной, благодаря чему она становилась удивительно живой, смешной, а также понятной и близкой читателю.

Поэзия Ншана Пешикташляна изобилует антонимами, которые придают тексту особую стилистическую окрашенность и экспрессию. Антонимы играют важнейшую роль в создании антитезы как экспрессивного средства и составной части сатирической речи.

В поэтических произведениях Ншана Пешикташляна присутствуют все виды сатиры, для отражения которых отобраны точные языковые единицы.

Օգտագործված գրականություն

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան», 1976:
2. Աստուածաշունչ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Հրատարակություն Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, 1994:
3. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., ԳԱ հրատ., 1989:
4. Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., «Լույս», 1984:
5. Պարոնյան Հ., Ընտիր երկեր, գիրք 1, Եր., Հայպետհրատ, 1954:
6. Պէշիկթաշեան Ն., Ծիրանի գօտի, Փարիզ, Տպգ. Յ. Ֆ. Ճարեան, 1945:
7. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Եր., ԵՊՀ հրատ., 1991:
8. Ջրբաշյան Է., Գրականության տեսություն, Եր., ԵՊՀ հրատ., 1980:
9. Арнольд И., Стилистика современного английского языка, Л., «Просвещение», 1973.
10. Бахтин М., Собрание сочинений, т. 5, М., «Русские словари», 1997.
11. Гальперин И., Очерки по стилистике английского языка, М., изд-во иностранной литературы, 1958.
12. Ефимов А., Стилистика художественной речи, М., изд-во Московского университета, 1961.
13. Пелевина Н., Стилистический анализ художественного текста, Л., «Просвещение», 1980.

REFERENCES

1. Aghayan E', Ardi hayereni bacatrankan bar'aran, Yer., «Hayastan», 1976(In Armenian).
2. Astowac'ashownch, Mayr At'or' S. E'jmiac'in, Hratarakowt'iwn Hayastani Astowac'ashnchayin y'nkerowt'ean, 1994(In Armenian).
3. E'loyan S., Jhamanakakic hayereni bar'ayin otwabanowt'yown, Yer., GA hrat., 1989 (In Armenian).
4. Melkonyan S., Aknarkner hayoc lezvi otwabanowt'yan, Yer., «Lowys», 1984(In Armenian).
5. Paronyan H., Y'ntir erker, girq 1, Yer., Haypethrat, 1954(In Armenian).
6. Pe'shikt'ashlean N., C'irani go'ti, P'ariz, Tpg. Y. F. Twarean, 1945(In Armenian).
7. Poghosyan P., Xosqi mshakowyt'i ew vochagitowt'yan himownqner, girq erkrord, Yer., EPH hrat., 1991(In Armenian).
8. Jrbashyan E', Grakanowt'yan tesowt'yown, Yer., EPH hrat., 1980(In Armenian).
9. Arnol'd I., Stilistika sovremennogo anglijskogo jazyka, L., «Prosveshhenie», 1973 (In Russian).
10. Baxtin M., Sbranie sochinenij, t. 5, M., «Russkie slovari», 1997 (In Russian).
11. Gal'prin I., Ocherki po stilistike anglijskogo jazyka, M., izd-vo inostranoj literatury, 1958 (In Russian).
12. Efimov A., Stilistika xudozhestvennoj rechi, M., izd-vo Moskovskogo universiteta, 1961 (In Russian).
13. Pelevina N., Stilisticheskij analiz xudozhestvennogo teksta, L., «Prosveshhenie», 1980 (In Russian).